Ավելին, սույն գործով հաստատված փաստերի հիման վրա՝ Երևանի ֆաղաֆադետարանը 2006 թվականի մայիսի 11-ի թիվ 18-09/2-1528 գրությամբ Դեմիրճյան փակուղիի 2ա հասցեում Լիլիթ Գրիգորյանին դատականող 33.6 քմ մակերեսով հողամասը Դեմիրճյան փակուղիի թիվ 4 հասցեում գտնվող հողամասի հետ համադրված լինելու վերաբերյալ հայտնել է, որ Դեմիրճյան փակուղիի թիվ 2ա հասցեում հողատակացման հիմքեր վարչության արխիվային նյութերում չեն հայտնաբերվել, իսկ ներկայացված սեփականության վկայականները, ինչդեպ նաև տեղագրական հանույթը բավարար չեն 1997 թվականի փետրվարի 12-ի սեփականության վկայականով Աոն Մարգարյանին դատականող Դեմիրճյան փակուղիի թիվ 4 հասցեում գտնվող հողամասի դիրքը դարգելու համար:

Վերը նշված դատառաբանությամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ ֆաղաֆացիական գործերով վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ ֆաղաֆացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի դատականջները՝ չի ադահողվել գործում եղած բոլոր ադացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն:

Այսդիսով, վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը բավարար է ՀՀ ֆաղաֆացիական դատավարության օրենսգրքի 226-րդ և 227-րդ հոդվածների համաձայն ՀՀ ֆաղաֆացիական գործերով վերաքննիչ դատարանի վճիռը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ ֆաղաֆացիական դատավարության օրենսգրքի 236-239-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Լիլիթ Գրիգորյանի վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ ֆաղաֆացիական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի հուլիսի 18-ի թիվ 06-2571 վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր ֆննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրադարակման դատից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ usnrագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ usnrագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Հայաստանի Հանրապետության  
վերաբնիչ դատարանի վճիռ  
Քաղաքացիական գործ թիվ 06-3082  
Նախագահող դատավոր՝ Ա.Թումանյան  
դատավորներ՝ Տ.Սահակյան  
Ա.Խառատյան

Քաղաքացիական գործ թիվ 3-2300 (ՎԳ)  
2006թ.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական դատարան (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ* դատավորներ Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս.ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Ս.ԳՅՈՒՐՉՅԱՆԻ  
Է.ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ

2006 թվականի նոյեմբերի 30-ին

դռնբաց դատական նիստում քննարկելով Սամվել Չախարյանի վճռաբեկ բողոքն ըստ Չոյա Չախարյանի հայցի ընդդեմ Սամվել Չախարյանի՝ ալիմենսի չափը փոփոխելու դիմումի մասին թիվ 06-3082 քաղաքացիական գործով ՀՀ քաղաքացիական գործերով վերաբնիչ դատարանի (այսուհետ՝ նաև Դատարան) 20.09.2006 թվականի վճռի դեմ,

**Պ Ա Ր Չ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախադասնությունը.**

Դիմելով դատարան՝ հայցվորը դիմում է փոփոխել նախկինում սահմանված ալիմենսի չափը և յուրաքանչյուր երեխայի համար իր նախկին ամուսնուց՝ Սամվել Չախարյանից բռնագանձել 15.000 ՀՀ դրամի չափով ալիմենս:

Կոսայի մարզի առաջին ասյանի դատարանի 14.07.2006 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ քաղաքացիական գործերով վերաբնիչ դատարանի 20.09.2006 թվականի վճռով հայցը բավարարվել է: Վճռվել է Սամվել Չախարյանից հոգու Չոյա Չախարյանի բռնագանձել ալիմենս որդես նրանց երկու երեխաների ապրուստի միջոց՝ յուրաքանչյուրի համար ամսական 15000 ՀՀ դրամի չափով, մինչև չափահաս դառնալը:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Սամվել Չախարյանը:  
Վճռաբեկ բողոքին դասասխսան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և դատանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներհիշեյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ ընտանեկան օրենսգրքի 71-րդ հոդվածը, որը դեմ է կիրառել:

Բողոք բերած անձը նշված դրույմը դատառաքանել է հետևյալ փաստարկով:

Վերաքննիչ դատարանն ալիմենսի չափը սահմանելիս հաշվի չի առել դատասխանողի գույքային, ընտանեկան դրությունը, ինչդեռ նաև այն հանգամանքը, որ ինքը հանդիսանում է երրորդ խմբի զինվորական հաշմանդամ, չունի մեծական աշխատանք, խնամքին ունի երկու մանկահասակ երեխաներ, կինը երկրորդ խմբի հաշմանդամ է: Բողոք բերած անձի դրույմամբ՝ վերաքննիչ դատարանի վճիռը վսանգի սակ է դրել նրանց աղբյուր և գոյասելու իրավունքը:

Բողոք բերած անձը դատանջել է բեկանել ՀՀ ֆաղափացիական գործերով վերաքննիչ դատարանի 20.09.2006 թվականի վճիռը և օրինական ուժ սալ Կոսայի մարզի առաջին ասյանի դատարանի 14.07.2006 թվականի վճիռն:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Սամվել և Չոյա Չախարյաններն ամուսնացել են 1995 թվականին: Համատեղ ամուսնությունից ունեցել են երկու երեխա:

2) Չոյա Չախարյանը և Սամվել Չախարյանը ամուսնալուծվել են 2000 թվականին: Կոսայի մարզի առաջին ասյանի դատարանի 09.12.2002 թվականի վճռով Սամվել Չախարյանից հօգուտ Չոյա Չախարյանի խնամքին զսվող երկու երեխաների՝ վճռվել է բռնագանձել ալիմենս կայուն դրամական գումարով, յուրաքանչյուր երեխայի համար 4000 դրամի չափով՝ մինչև նրանց չափահաս դառնալը:

3) Պատասխանող Ս.Չախարյանը 2003 թվականին երկրորդ անգամ ամուսնացել է և ներկայումս նոր ամուսնությունից ունի երկու մանկահասակ երեխա:

4) Պատասխանողը երրորդ, իսկ կինը՝ երկրորդ խմբերի հաշմանդամներ են:

5) Պատասխանողը չունի վարձատրվող աշխատանք:

**4. Վճռաբեկ դատարանի դատառաքանությունները և եզրահանգումները.**

Քննելով վճռաբեկ բողոքը՝ նշված հիմքի սահմաններում Վճռաբեկ դատարանը զսնում է, որ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 69-րդ հոդվածի համաձայն՝ ալիմենսի ամենամսյա վճարումների չափը յուրաքանչյուր երեխայի համար չդեմ է դակաս լինի սահմանված նվազագույն աշխատավարձի չափից, իսկ այդ բաժինների չափերը կարող են դատարանով նվազեցվել կամ ավելացվել՝ հաշվի առնելով կողմերի գույքային ու ընտանեկան դրությունը և ուժադրության արժանի ցահերը:

---

ՀՀ ֆաղաֆացիական գործերով վերաֆննիչ դասարանը, որդես 15000 դրամ ալիմենսի չափ սահմանելու հիմնավորում՝ իր վճռում հղել է Հայաստանում սահմանված նվազագոյն աշխատավարձի չափին:

«Նվազագոյն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրադատության օրենքի համաձայն՝ օրենսգրքերի, օրենքների, Հանրադատության Նախագահի հրամանագրերի, կառավարության և վարչադատի որոշումների իմաստով որդես հաշվարկային հիմք չի կարող ընդունվել նոյն օրենքով սահմանված նվազագոյն ամսական աշխատավարձի չափը (15000 դրամ): Նշված ակտերում որդես հաշվարկային հիմք ընդունվում է 1000 դրամը:

Հետևաբար, ալիմենսի ամենամսյա վճարումների չափը որոշելիս դասարանը որդես հաշվարկային հիմք դես է ընդունել 1000 դրամը:

ՀՀ ընսանեկան օրենսգրքի 71-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կայուն դրամական գումարով ալիմենսի չափը որոշում է դասարանը՝ ելնելով երեխայի նախկին կենսատադահովման մակարդակի առավելագոյն դահողանման հնարավորությունից՝ հաշվի առնելով կողմերի գոյբային ու ընսանեկան դրոթյունը և ուսողրոթյան արժանի ատերը:

Սույն գործով դասատխանող Սամվել Չախարյանը 2003 թվականին ամուսնացել է երկրող անգամ և ներկայումս ունի երկու մանկահասակ երեխա:

Ալիմենսի ամենամսյա վճարումների չափը որոշելիս դասարանը հաշվի չի առել դասատխանողի գոյբային ու ընսանեկան դրոթյունը և ուսողրոթյան արժանի ատերը, մասնավորատես այն, որ դասատխանողը մեսական աշխատանք չունի, 2003 թվականին կազմել է նոր ընսանիք, վերջին ամուսնոթյունից ունի երկու մանկահասակ երեխա, ինքը և կինը հաշմանդամներ են:

ՀՀ Սահմանողրոթյան 34-րդ հոդվածի համաձայն՝ յուրաբանչյուր ոք ունի իր և իր ընսանիքի համար բավարար կենսամակարդակի իրավունք: Սահմանողրական այս երաշխիքը ենթողրում է յուրաբանչյուր անձի առողջոթյան դահողանման և կենսագործունեոթյան ադահովման համար անհրաժես, միջագոյնորեն ընդունված, ֆիզիոլոգիական, առողջատահական և սոցիալական նորմատիվներով հաշվարկված սննդամթերքի և հիմնավորված գործակիցներով հաշվարկված ոչ դարենային ադրանքների նվազագոյն ֆանակի ադահովման իրավունք:

Հաշվի առնելով սույն գործի փաստական հանգամանքները, որոնք վերաբերում են դասատխանողի ընսանեկան և սոցիալական դրոթյանը, Վճռաբեկ դասարանը գնում է, որ վերաֆննիչ դասարանի դասական ակտի կատարման արդյունքում, կարող է առաջանալ Սամվել Չախարյանի և նրա ընսանիքի՝ ՀՀ Սահմանողրոթյամբ ամրագրված բավարար կենսամակարդակի իրավունքի խախտման իրական վսանգ:

Այտղիսով, սույն բողոքի հիմքի առկայոթյունը, ՀՀ ֆաղաֆացիական դասավարոթյան օրենսգրքի 226-րդ հոդվածի համաձայն, ՀՀ ֆաղաֆացիական գործերով վերաֆննիչ դասարանի 20.09.2006 թվականի վճիող բեկանելու հիմք է:

Ելնելով վերողրալից և ղեկավարվելով ՀՀ ֆաղաֆացիական դասավարոթյան օրենսգրքի 236-239-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դասարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Սամվել Ջախարյանի վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ ֆաղափացիական գործերով վերաքննիչ դատարանի 20.09.2006 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման դաիից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ usnrագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ usnrագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ ֆաղաֆաղիական գործերով  
վերաբնիչ դատարանի վճիռ  
Քաղաֆաղիական գործ թիվ 06-2357  
Նախագահող դատավոր՝ Գ.Մասինյան  
դատավորներ՝ Լ.Գրիգորյան  
Ն.Հովսեփյան

Քաղաֆաղիական գործ թիվ 3-2305 (ՎԳ)  
2006թ.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ՀՀ վճռաբեկ դատարանի ֆաղաֆաղիական դալաճը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ* Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Է.ՀԱՅԻԻՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս.ԳՅՈՒՐՉՅԱՆԻ  
Ս.ԱՆՏՈՆՅԱՆԻ

2006 թվականի նոյեմբերի 30-ին

դռնբաղ դատական նիստում, ֆննելով Մառլեն Հակոբյանի ներկայաղոցչի վճռաբեկ բողոքն ըս Ալինա Ավեսիսյանի հայղի ընդդեմ Մառլեն Հակոբյանի՝ ըս օրենքի հասանելի ժառանղական գոյֆն առանղնաղնելու դահանղի մասին թիվ 06-2357 ֆաղաֆաղիական գործով ՀՀ ֆաղաֆաղիական գործերով վերաբնիչ դատարանի 04.10.2006 թվականի վճռի դեմ,

**Պ Ա Ր Չ Ե Ց**

**1. Գործի դատարական նախաղաղմությունը.**

Դիմելով դատարան՝ հայղվողը դահանղել է համատեղ սեֆականություն հանղիսաղող գոյֆիղ որղես ժառանղական գոյֆ առանղնաղնել իր հանղողյաղ ամուսնո՝ Արսեն Հակոբյանի բաղինը և հարղելի ճանաղել ժառանղության ընղունման ժամղեֆի բաղթողումը:

Վայող ձորի մարղի առաղին աղյանի դատարանի 10.05.2006 թվականի վճռով հայղը բավարարվել է:

ՀՀ ֆաղաֆաղիական գործերով վերաբնիչ դատարանի 04.10.2006 թվականի վճռով հայղը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոքը ներկայացրել է Մ.Հակոբյանի ներկայացուցիչը:  
Վճռաբեկ բողոքին լուրջապես չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքեր, փաստարկերը և լուրջացումը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներհանրապես հիմնավորումներով.

1) վերաբնիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ ֆաղաֆաղիական օրենսգրքի 1228-րդ հոդվածի 2-րդ մասի լուրջացումները:

Բողոք բերած անձը նշված լուրջացումը լուրջացում է հետևյալ փաստարկով.

Հայցվորը դատարանին չի ներկայացրել ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողնելու՝ օրենքով նախատեսված հարգելի լուրջացում: Մինչդեռ, վերաբնիչ դատարանն Ա.Ավետիսյանի կողմից ժառանգությունն ընդունելու ժամկետի բացթողումն անհիմն ճանաչել է հարգելի:

2) վերաբնիչ դատարանը խախտել է ՀՀ ֆաղաֆաղիական դատարարության օրենսգրքի 53-րդ հոդվածի լուրջացումները, ինչի արդյունքում չի կիրառել Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների լուրջացումային մասին Եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածը, ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածը և 31-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ ֆաղաֆաղիական օրենսգրքի 163-րդ հոդվածի 1-ին մասը, 201-րդ հոդվածը և 1186-րդ հոդվածի 1-ին մասը, որոնք լուրջացում է կիրառել:

Բողոք բերած անձը նշված լուրջացումը լուրջացում է հետևյալ փաստարկով.

Գործի քննությանը ձեռք չի բերվել որևէ աղացույց այն մասին, որ վեճի առարկան՝ Եղեգնաձոր ֆաղաֆի Մղանդարյան 35 հասցեում գտնվող տունը հանդիսանում է հանգուցյալ Արսեն Հակոբյանի սեփականությունը: Դատարանը, ըստ էության, առանց լուրջացում հիմնավորման, ճանաչել է Ալինա Ավետիսյանի և նրա երեխաների սեփականության իրավունքը Մառլեն Հակոբյանի սեփականությունը հանդիսացող սան նկատմամբ:

3) վերաբնիչ դատարանը չի կիրառել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 3-րդ մասը:

Բողոք բերած անձը նշված լուրջացումը լուրջացում է հետևյալ փաստարկով.

Նշված հոդվածի համաձայն, իրավական ակտում կատարված փոփոխությունների կամ լուրջացումների գործողությունները սարածվում են դրա ուժի մեջ մտնելուց հետո ծագած հարաբերությունների վրա, եթե այլ բան նախատեսված չէ: Հետևաբար, ՀՀ ֆաղաֆաղիական օրենսգրքի 202-րդ հոդվածի 6-րդ մասի փոփոխությունները, որոնք տեղի են ունեցել 10.10.2005 թվականին, և սահմանում են, որ հողամասի սեփականատերը ձեռք է բերում իրեն լուրջացում հողամասի վրա կառուցված շենքերի, շինությունների և այլ անբարձ գույքի սեփականության իրավունք, չեն կարող սարածվել 1963 թվականին լուրջացում հողամասի վրա:

Վերագրյալի հիման վրա բողոք բերած անձը լուրջացում է բեկանել ՀՀ ֆաղաֆաղիական գործերով վերաբնիչ դատարանի 04.10.2006 թվականի վճիռը՝ սան և սնամեղ հողամասի մասով և այդ մասով գործն ուղարկել նոր քննության:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ

---

փաստերը՝

1) Եղեգնաձոր ֆաղափի Մղանդարյան փողոցի թիվ 35 բնակելի տունը կառուցվել է 1963 թվականին՝ Երանոս Հովհաննեսի Հակոբյանի կողմից: Այդ տունը գրանցվել է նրա որդի Մառլեն Երանոսի Հակոբյանի անունով, որտեղ ավելացել են նաև օժանդակ կառույցներ և շենքեր վերակառուցվել է:

2) 05.04.1991 թվականին հողի սեփականաձեռքմանը մասնակցել են Մառլեն Հակոբյանը, նրա կինը՝ Ալվարդ Թումանյանը, դուստրը՝ Ալիսա Հակոբյանը, որդին՝ Արմեն Հակոբյանը և հայցվորի ամուսինը՝ Արսեն Հակոբյանը, որոնց սեփականաձեռքմանը է 0,66 հա հողամաս:

3) Արսեն Հակոբյանը ծնվել է 1965 թվականին, ամուսնացել է Ա.Ավետիսյանի հետ 1996 թվականին, համատեղ ամուսնության ընթացքում ունեցել են երկու երեխա՝ Արման Արսենի Հակոբյան և Ալլա Արսենի Հակոբյան: Արսեն Հակոբյանը մահացել է 19.05.2004 թվականին:

4) Ժառանգության իրավունքի վկայական սահմալու խնդրանքով Ա.Ավետիսյանը դիմել է նոտարական գրասենյակ, սակայն ստացել է մերժում այն դասձառաբանությամբ, որ բաց է թողել ժառանգությունն ընդունելու համար սահմանված ժամկետը: Սույն գործով հայցը ներկայացվել է դատարան 01.03.2006 թվականին:

#### **4. Վճռաբեկ դատարանի դասձառաբանությունները և եզրահանգումները.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում Վճռաբեկ դատարանը զսնում է, որ՝

*1) վճռաբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ ֆաղափացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողած ժառանգի դիմումի հիման վրա դատարանը կարող է նրան ձանաչել ժառանգությունն ընդունած՝ հարգելի համարելով ժամկետը բաց թողնելու դատաձեռները, եթե դարզվի, որ ժամկետը բաց թողնելու դատաձեռ է դարձել այն հանգամանքը, որ ժառանգը չգիտեր և դատարանը չէր իմանալ ժառանգության բացման մասին, ու դայմանով, որ ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողած ժառանգն այդ ժամկետը բաց թողնելու դատաձեռները վերացվելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, դիմել է դատարան:

Նշված նորմի վերլուծությունից հետևում է, որ դատարանը կարող է հարգելի ձանաչել ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողնելու դատաձեռները միայն այն դեպքում, երբ ժառանգը կադացուցի, որ չգիտեր և դատարանը չէր իմանալ ժառանգության բացման մասին, այսինքն՝ ժառանգատի մահվան մասին (ՀՀ ֆաղափացիական օրենսգրքի 1187-րդ հոդված) և այն դայմանով, որ իմանալուց հետո վեց ամսվա ընթացքում դիմել է դատարան:

Նշված դատաձեռաբանությունների հիման վրա հիմնավոր է ՀՀ ֆաղափացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածի 2-րդ մասի խախտման մասին վճռաբեկ բողոքի փաստարկը, քանի որ վերաբնիչ դատարանն առանց որևէ դատաձեռաբանության հարգելի է ձանաչել Ա. Ավետիսյանի կողմից ժառանգությունն ընդունելու ժամկետի բացթողումը:

*2) վճռաբեկ բողոքն երկրորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ ֆաղափացիական օրենսգրքի 1186-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

ժառանգության զանգվածի մեջ է մտնում ժառանգության բացման օրը ժառանգատիկն ռասկանող գույքը:

Վերաբերյալ նախատեսված համարելով Մառլեն Հակոբյանի և նրա ընտանիքի անդամների, այդ թվում՝ Արսեն Հակոբյանի կողմից 05.04.1991 թվականին հողամասը սեփականաւեւոհելու հանգամանքը, միաժամանակ, ճանաչել է Արսեն Հակոբյանի սեփականության իրավունքը 1963 թվականին կառուցված սան նկատմամբ: Այսինքն՝ ըստ էության, ժառանգական զանգվածի մեջ ընդգրկվել է նաև ժառանգատիկն չդասկանող գույքը:

Վերը նշված դատաճառաբանության հիման վրա, Վճռաքել դատարանը գտնում է, որ հիմնավոր են նաև ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի, 31-րդ հոդվածի 1-ին մասի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի խախտման մասին վճռաքել բողոքի փաստաթղթերը, քանի որ Մառլեն Հակոբյանի սեփականության (սեփականության իրավունքը գրանցված է) նկատմամբ, առանց դրա դադարելու, ըստ էության, ճանաչվել է մեկ այլ անձի՝ Արսեն Հակոբյանի սեփականության իրավունքը:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների դաւեւոհանության մասին» եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ ոչ ոքի չի կարելի գրել սեփական գույքից՝ բացառությամբ հանրային շահերի դաւեւոհանության համար և օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով նախատեսված դայամանքներով: Այստիսով, դատարանի կողմից խախտվել է նաև Կոնվենցիայի 1-ին արձանագրության նշված հոդվածի դահահնջը:

*3) վճռաքել բողոքն երրորդ հիմքով անհիմն է:*

Բողոքարկվող վճռում վերաբերյալ դատարանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 202-րդ հոդվածի 6-րդ մասը չի կիրառել, հետևաբար այդ հիմքով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 3-րդ մասը չկիրառելու (խախտելու) վերաբերյալ ներկայացված՝ սույն բողոքի երրորդ հիմքի փաստարկն անհիմն է:

Այստիսով, վճռաքել բողոքի առաջին և երկրորդ հիմքերի առկայությունը Վճռաքել դատարանը ՀՀ քաղաքացիական դատարարության օրենսգրքի 226-րդ հոդվածի համաձայն վերաբերյալ դատարանի վճիռը բեկանելու բավարար հիմք է համարում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատարարության օրենսգրքի 236-239-րդ հոդվածներով՝ Վճռաքել դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաքել բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ քաղաքացիական գործերով վերաբերյալ դատարանի 04.10.2006 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրադարակման դահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ usnrագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵԼ՝ usnrագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ ֆաղաֆաղիական գործերով

Քաղաֆաղիական գործ թիվ 3-2316(ՎԳ)

վերաֆննիչ դասարանի վճիռ

2006թ.

Քաղաֆաղիական գործ թիվ 06-3209

Նախագահող դասավոր՝ Վ.Ավանեսյան

դասավորներ՝ Դ.Խաչատրյան

Կ.Հակոբյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ՀՀ վճռաբեկ դասարանի ֆաղաֆաղիական դալաղը (այսուհետ՝ Վճռաբեկ դասարան)

*նախագահությունը* Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությունը* դասավորներ Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Է.ՀԱՅԻԻՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս.ԳՅՈՒՐՁՅԱՆԻ  
Ս.ԱՆՏՈՆՅԱՆԻ

2006 թվականի նոյեմբերի 30-ին

դռնբաց դասական նիստում, ֆննելով Ռ. Տեր-Վարդանյանի վճռաբեկ բողոքն ըստ Ռ. Տեր-Վարդանյանի դիմումի ընդդեմ ՀՀ գլխավոր դասախագության՝ դաճճնաղար անձի գործողությունները վիճարկելու մասին թիվ 06-3209 ֆաղաֆաղիական գործով ՀՀ ֆաղաֆաղիական գործերով վերաֆննիչ դասարանի 29.09.2006 թվականի վճռի դեմ,

**Պ Ա Ր Չ Ե Ց**

**1. Գործի դասավարական նախադասմությունը.**

Դիմելով դասարան Ռ.Տեր-Վարդանյանը դահանջել է դարղավորեցնել ՀՀ գլխավոր դասախագության կոռուողիայի դեմ դայֆարի բաժնի դասախագին թույլ ղալ ծանոթանալ թիվ 61203305 ֆրեական գործի նյութերին և կասարել դասճեմահանումներ:

Կեմսրոն և Նորֆ-Մարաճ համայնֆների առաջին ասյանի դասարանի 17.03.2006 թվականի վճռով դիմումը մերժվել է:

ՀՀ ֆաղաֆաղիական գործերով վերաֆննիչ դասարանի 10.05.2006 թվականի վճռով դիմումը մերժվել է:

ՀՀ վճռաբեկ դասարանի ֆաղաֆաղիական և ղնեղասական գործերով դալալի 28.07.2006 թվականի որոճմամբ ՀՀ ֆաղաֆաղիական գործերով վերաֆննիչ դասարանի

10.05.2006 թվականի վճիռը բեկանվել է:

ՀՀ ֆաղաֆաղիական գործերով վերաքննիչ դատարանի 29.09.2006 թվականի վճռով դիմումը կրկին մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոքը ներկայացրել է Ռ.Տեր-Վարդանյանը:

Վճռաբեկ բողոքին դատաստիսան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և դատահնչը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներհիփոխյալ հիմնավորումներով.

1) վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածը, որը դիմում է կիրառել:

Բողոք բերած անձը նշված դիմումը դատաճառաբանում է հետևյալ փաստարկներով:

Նշված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ նշված հոդվածի 1-ին մասը նախատեսում է ֆաղաֆաղիական և ֆրեական դատավարությունում, ինչդեպես նաև վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթում որդես վստահողի ներկայացուցիչ կամ դաճեղան մասնակցող փաստաբանի իրավունքների սահմանման կարգը, այն է՝ օրենքով:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի նույն հոդվածի 2-րդ մասը համադարձիակ (ունիվերսալ) բնույթ է կրում և նախատեսում է փաստաբանի՝ ադագույցներ ձեռք բերելու իրավունքը:

2) վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ ֆաղաֆաղիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված դիմումը դատաճառաբանել է հետևյալ փաստարկներով:

ՀՀ ֆաղաֆաղիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածը չի սահմանափակում «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով փաստաբանին վերադասված իրավունքները, քանի որ ադագույց դատահանջելու միջնորդությամբ փաստաբանն իրավունք ունի դիմելու ինչդեպես դատարանին, այնդեպ էլ դրանք ձեռք բերելու անձամբ:

3) Դատարանը չի կիրառել ՀՀ ֆաղաֆաղիական դատավարության օրենսգրքի 48-րդ և 87-րդ հոդվածների դատահանջները:

Բողոք բերած անձը նշված դիմումը դատաճառաբանել է հետևյալ փաստարկներով:

Թիվ 61203305 ֆրեական գործի նյութերը որդես ադագույց անհրաճեճ են հայցադիմում կազմելու համար, իսկ ՀՀ ֆաղաֆաղիական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածի համաձայն՝ հայցադիմումին կից ներկայացվում են ադագույցներ, հակառակ դեղդում հայցադիմումն օրենքի դատահանջից ելնելով ենթակա է վերադարձման:

ՀՀ ֆաղաֆաղիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ դիմում է ադագույցի իր դատահանջների և առարկությունների հիմքում ընկած հանգամանքները, որի հնարավորությունը սվյալ դեղդում սահմանափակվում է:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը դատահանջել է բեկանել ՀՀ ֆաղաֆաղիական գործերով վերաքննիչ դատարանի 29.09.2006 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

---

---

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Ռ. Տեր-Վարդանյանի դիմումի հիման վրա ՀՀ գլխավոր դասախազության կոռուպցիայի դեմ դայբարի բաժնում 11.07.2005 թվականին ՀՀ ֆրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ կետի և 308-րդ հոդվածի 1-ին մասի հասկանիչներով հարուցվել է թիվ 61203305 ֆրեական գործը և կասարվել է նախաքննություն: 30.11.2005 թվականի որոշմամբ նշված ֆրեական գործով վարույթը կարճվել է:

2) Ռ. Տեր-Վարդանյանը որդես փաստաբան, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի հիմքով 19.12.2006 թվականին դիմել է դասախառնողին նշված ֆրեական գործի նյութերին ծանոթանալու և լուսադասձեռններ կատարելու խնդրանքով: 22.12.2006 թվականի թիվ 36-24-05 գրությամբ դիմումը մերժվել է:

3) Ռ. Տեր-Վարդանյանին ֆրեական գործի նյութերին ծանոթանալը և դասձեռնահանումներ կատարելն անհրաժեշտ է այլ դասարանում ֆինվոլ մեկ այլ ֆաղափացիական գործով աղացույցներ ներկայացնելու համար:

### **4. Վճռաբեկ դասարանի դասձառաբանությունները և եզրահանգումները.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում Վճռաբեկ դասարանը գտնում է, որ

*1) վճռաբեկ բողոքի առաջին հիմքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ փաստաբանական գործունեությունն իրավադաճության գործունեության ռեսակ է, որն ուղղված է իրավաբանական օգնություն ստացողի հետադարձ օրինական ռահերի իրականացմանը՝ օրենքով չարգելված միջոցներով և եղանակներով:

Նույն օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ փաստաբանը, մասնավորապես, իրավունք ունի դիմելու դեսական կամ սեղական ինֆնակառավարման մարմիններ կամ կազմակերպություններ՝ իրավաբանական օգնություն ցույց սալու համար անհրաժեշտ փաստաթղթեր սանալու դահանջով: Նշված մարմիններն ու կազմակերպությունները դարսավոր են օրենսդրությամբ սահմանված կարգով փաստաբանին սրամադրել դահանջվող փաստաթղթեր կամ դրանց դասձեռնները:

«Տեղեկասվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաֆանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնսրած սեղեկությանը և (կամ) դա սանալու նդասակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու սեղեկասվություն սնօրինողին և սանալու այդ սեղեկությունը:

Վերը նշված նորների դահանջները հաճվի առնելով, Վճռաբեկ դասարանը գտնում է, որ փաստաբանը դեսական և սեղական ինֆնակառավարման մարմիններից կամ կազմակերպություններից կարող է փաստաթղթեր դահանջել և սանալ ոչ միայն կոնկրետ գործով որդես ներկայացուցիչ կամ դաճության հանդես գալու ժամանակ, այլ նաև օրենքով չարգելված ցանկացած այլ ձևով իրավաբանական օգնություն ցույց սալու ընթացում, հետևաբար Ռ.Տեր-Վարդանյանը նշված հոդվածի իմաստով իրավունք ունի դիմելու ՀՀ գլխավոր դասախազությանը՝ թիվ 61203305 ֆրեական գործի նյութերին ծանոթանալու և դրանցից լուսադասձեռններ անելու խնդրանքով:

2) վճռաբեկ բողոքն երկրորդ հիմնով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով ամրագրված է սեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, սարածելու յուրաքանչյուրի ազատությունը, որդես անձի հիմնական և անօտարելի իրավունք:

«Տեղեկավորության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած սեղեկությանը և (կամ) դա ստանալու նդասակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու սեղեկավորություն սնօրհնողին և ստանալու այդ սեղեկությունը:

ՀՀ ֆաղաֆաղիական դասավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձը, որը հնարավորություն չունի անհրաժեես աղագույցն ինֆնօրույն ձեռք բերել գործին մասնակցող կամ չմասնակցող այլ անձից, որի մոս այն գսնվում է, իրավունք ունի սվյալ աղագույցը ղախանջելու միջնօրողությամբ դիմել դասարան:

Նված հոդվածի իմաստով նախ՝ համաղասասխան միջնօրողությամբ դասարան դիմելը գործին մասնակցող անձի (կամ նրա ներկայագուցի) իրավունքն է, և ոչ՝ ղարսականությունը: Երկրորդ՝ նման միջնօրողությունը կարող է ներկայագվել միայն ֆաղաֆաղիական գործով վարույթի ընթագֆում:

Վերը նվածի հիման վրա, Վճռաբեկ դասարանը գսնում է, որ «Փասսաբանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կեսով ամրագրված իրավունքի իրականագումը չի կարող կախվածության մեջ դրվել ՀՀ ֆաղաֆաղիական դասավարության օրենսգրքի 49-րդ հոդվածից. այդ իրավունքները կարող են իրականագվել ինչղես միաժամանակ, այնղես էլ ինֆնօրույն:

3) վճռաբեկ բողոքն երրորդ հիմնով անհիմն է:

ՀՀ ֆաղաֆաղիական դասավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ ղեսֆ է աղագուցի իր ղախանջների և առարկությունների հիմնում ընկած հանգամանքները: Իսկ նույն օրենսգրքի 87-րդ հոդվածը սահմանում է հայցաղիմումի ձևին և բովանղակությանը ներկայագվող ղախանջները:

Վճռաբեկ դասարանը գսնում է, որ վերաֆննիչ դասարանի վճռով ՀՀ ֆաղաֆաղիական դասավարության օրենսգրքի նված հոդվածների ղախանջները չեն խախսվել, ֆանի որ դրանք վերաբերում են ֆաղաֆաղիական կոնկրես դասավարության ընթագֆում կողմերի դասավարական-իրավական կարգավիճակին և դասարան ներկայագվող հայցաղիմումի ձևին և բովանղակությանը: Բողղաբկվող վճռով խախսվել են ո՛չ թե կողմերի դասավարական իրավունքները, այլ դիմողի նյութական իրավունք՝ սեղեկավորություն ստանալու իրավունքը, որը երաւխավղրված է ՀՀ Սահմանադրությամբ և «Փասսաբանության մասին» ՀՀ օրենքով:

Այղղիստվ, սույն վճռաբեկ բողղբի առաջին և երկրորդ հիմքերի առկայությունը Վճռաբեկ դասարանը բավարար է համարում ՀՀ ֆաղաֆաղիական գործերով վերաֆննիչ դասարանի 29.09.2006 թվականի վճիռը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դասարանը, ղեկավարվելով Մարղու իրավունքների և հիմնարար ազատությունների ղաւեսղանության մասին Եվրղղական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաւխավղրված արղարաղասության արղղունավեսության սկզբունքով և ՀՀ ֆաղաֆաղիական դասավարության օրենսգրքի 236-րդ հոդվածի 1-ին մասի

---

4-րդ կետի դրույթներով, զսնում է, որ Ռ. Տեր-Վարդանյանի դիմումն ենթակա է բավարարման՝ բողոքարկվող դասարական ակտը փոփոխելու միջոցով:

Քանի որ սույն գործի փաստական հանգամանքները Վճռաբեկ դասարանին սալիս են բողոքարկվող դասական ակտը նման ձևով փոփոխելու հնարավորություն, և դա բխում է արդարադասության արդյունավետության շահերից, Վճռաբեկ դասարանը զսնում է, որ ՀՀ ֆաղաֆացիական գործերով վերաֆննիչ դասարանի 29.09.2006 թվականի վճիռն ենթակա է փոփոխման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ ֆաղաֆացիական դասավարության օրենսգրքի 236-239-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դասարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել և փոփոխել ՀՀ ֆաղաֆացիական գործերով վերաֆննիչ դասարանի 29.09.2006 թվականի վճիռը՝ Ռ. Տեր-Վարդանյանի դիմումը բավարարել:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրադարակման դաիից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ usnrusqrupjunis  
ԴԱՏԱՎՈՐՆԵԸ՝ usnrusqrupjuninir*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՈՒՐԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ սնտեսական դատարանի վճիռ  
Քաղաքացիական գործ թիվ S-1553  
Նախագահող դատավոր՝ Ն.Տավարացյան

Քաղաքացիական գործ թիվ 3-2325(ՏԳ)  
2006թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի ֆաղաքացիական դալաղը (այսուհես՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությանը* Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությանը դատավորներ* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Է.ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս.ԳՅՈՒՐՁՅԱՆԻ  
Ս.ԱՆՏՈՆՅԱՆԻ

2006թ. նոյեմբերի 30-ին

դռնբաց դատական նիստում, ֆննելոլ ՀՀ գլխավոր դատախազի սեղակալի վճռաբեկ բողոքն ըս «Ագրոկոողազակցություն» ՍՊԸ-ի (այսուհես՝ ընկերություն) դիմումի ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային ոլեսական ծառայության Սղանդարյան-1 հարկային սեսչության (այսուհես՝ Տեսչություն)՝ 08.11.2005 թվականի թիվ 1015546 ստուգման ակսն անվավեր ճանաչելոլ ողահանջի մասին թիվ S-1553 ֆաղաքացիական գործոլ ՀՀ սնտեսական դատարանի 30.05.2006 թվականի վճռի դեմ,

Պ Ա Ր Ձ Ե Ց

**1. Գործի դատավարական նախադասմությունը.**

Դիմելոլ դատարան՝ դիմումաստոն ողահանջել է անվավեր ճանաչել Տեսչության 08.11.2005 թվականի թիվ 1015546 ակսը:

ՀՀ սնտեսական դատարանի 30.05.2006 թվականի վճռոլ դիմումը բավարարվել է: Սույն գործոլ վճռաբեկ բողոքը ներկայացրել է ՀՀ գլխավոր դատախազի սեղակալը:

Վճռաբեկ բողոքին ներկայացվել է ողասասխան:

**2. Վճռաբեկ բողոքի հիմները, փաստարկները և ողահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը ֆննվում է հեսնյալ հիմների սահմաններում՝ ներֆոիբյալ հիմնավորումներոլ.

1) դատարանը չի կիրառել «Հայաստանի Հանրաղեսությունում ստուգումների



ՀՀ կառավարության 18.09.1998 թվականի թիվ 580 որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի 12-րդ կետին համադասասխան, կասարկել է ընկերության ակտիվների բարձի և առաջացման աղբյուրների չափի մնացորդների վերլուծություն, որի արդյունում ընկերությանն առաջադրվել է 130.123.1 հազար ՀՀ դրամի հարկային դարձակոթություն, այդ թվում՝ շահութահարկը՝ 62.883.4 հազար ՀՀ դրամ, ԱԱՀ՝ 67.175.7 հազար ՀՀ դրամ, սոյժեր՝ 0,6 հազար ՀՀ դրամ:

Վիճարկվող ակտը համադասասխանում է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ կետի դրամացումներին: Նշված հոդվածին համադասասխան աղբյուրների անհատույց մասակարարման, ծառայությունների անհատույց մասուցման, ինչդեռ նաև այն դեղում, երբ դրանց դիմաց սկսյալ գործարկների համար սովորականի համեմատ կիրառվում են իրական արժեքից էականորեն ցածր գներ (մասնակի հատուցում), հարկման օբյեկտ է համարվում այդդիսի կամ նույնանման գործարկների համար համեմատելի հանգամանակներում որդես հարկվող Երջանառություն ընդունվող՝ սույն օրենքին համադասասխան որոշվող մեծությունը, իսկ դրա բացակայության դեղում՝ գործարար Երջանակներում համեմատելի հանգամանակներում նույնանման գործարկների համար սովորաբար որդես հարկման օբյեկտ ընդունվող մեծությունը (գործարի իրական արժեք):

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը դրամացում է բեկանել ՀՀ ճնեսական դասարանի 30.05.2006 թվականի վճիռը և գործն ուղարկել նոր քննության:

### **2.1. Վճռաբեկ բողոքի դասասխանում բերված փաստարկները.**

Վճռաբեկ բողոքի դասասխանում բերվել են հեսկյալ հակափաստարկները.

Ընկերության կողմից որևէ խախտում թույլ չի սրվել, հարկային մարմնին ներկայացվել են ճեղրի հաւվեսվություններ, իսկ համադասասխան հարկերը վճարվել են:

Հարկային մարմնի, ինչդեռ նաև վճռաբեկ բողոք բերած անձի կողմից չի նեվել և չի աղացուցվել, թե իրականում որան է կազմել գործարի արժեքը, հեսաբար, բերված դասճանաբանությունները անհիմն են:

«Վարչարարության հիմնումների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է, որ վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանակների վերաբերյալ անձի ներկայացրած սվյալները, սեղեկությունները համարվում են հավաստի բողոք դեղդեղում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի աղացուցել: Եթե վարչական մարմինը հիմնավոր կասկածներ ունի անձանց ներկայացրած սվյալների, սեղեկությունների իսկության վերաբերյալ, աղա ինքը դարձակոթ է ինքնուրույն և իր հաւվին ճեղնարկել միջոցներ՝ դրանց իսկության մեջ հավաստիանալու:

Ծառայությունը չի աղացուցել հակառակը, այսինքն՝ չի հաստատել այն հանգամանքը, որ անեարժ գույքը վաճառվել է ավելի բարձր գնով, քան ներկայացվել է հարկային մարմնին ներկայացված հաւվեսվություններով:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նեանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նեանակություն ունեն հեսկյալ փաստերը՝

1) 06.10.2004 թվականին կնքված սարաժամկես վճարումով անեարժ գույքի

---

առուվաճառքի ղայմանագրով ընկերությունը սեփականության իրավունքով իրեն ղասկանող Երևան քաղաքի Խանջյան 13 հասցեում 00728,5 հա սեփական և 0,0243 հա վարձակալած հողի վրա գնվող 1246,7մ մակերեսով վարչական շենքը 36,0 մլն ՀՀ դրամով վաճառել է Ս.Մելիքյանին:

2) Նված անւարժ գույքի արժեքի գնահատման վերաբերյալ Տեսչության կողմից հարցում է կատարվել ՀՀ կառավարությանն առընթեր անւարժ գույքի կադասրի ղեսական կոմիսե, «Մաղաքյան և ողիներ» և «Էլեֆանտ-ռիելթի» անւարժ գույքի գնահատմամբ գրադվող ընկերություններ: Հաւարկների հիմք է ընդունվել նված կազմակերղություններից ՀՀ կառավարությանն առընթեր անւարժ գույքի կադասրի ղեսական կոմիսեի ղասասխանը, ըս ողի հաւարկվել է վիճելի գույքի նվազագույն արժեքը՝ 234.901.3 հազար ՀՀ դրամ:

3) Տեսչության աւխասակիցների կողմից ընկերությունում կատարվել է բյուջեի հե սիդիսհարաբերղությունների ճեսության սսուգում, ողի արղյունում կազմվել է 08.11.2005 թվականի թիվ 1015546 ակսը, ոռով ընկերղյանը վճարման է առաղարվել 130.123.1 հազար ՀՀ դրամ հարկային և ղարսաղիղ սղցիալական աղահովաղության վճարի լրացղցիղ ղարսավորղյան գումար:

#### **4. Վճարել ղասարանի ղասճառաբանղյունները և եղրահանղումները.**

Քննելով վճարել բողղը նված հիմքերի սահմաններում Վճարել ղասարանը գնում է, ոը՝

*1) վճարել բողղն առաղին հիմքով հիմնալոր է հեկյալ պասճառաբանղյանը.*

Դիմումը բավարարելի սնեսական ղասարանը ղասճառաբանել է, ոը սսուգման ակսը կազմվել է «Հայասանի Հանրաղեսղյունում սսուղումների կազմակերղման և անղկաղման մասին» ՀՀ օրենքի ղահանղների խախսմամբ, սակայն չի նեղ, թե մասնավորաղես ոը խախսումներն են սեղ գեղ սսուգման ակսում, ոռնց հեկանղով կասկաճի սակ է դրվել ակսի օղինականղյան հարցը:

Սակայն, թիվ 1015546 սսուգման ակսում մանրամասն նկարաղրվաճ են արճանաղրվաճ խախսումները, ինչղես նան վկայակոչվաճ են ղասասխանասվղյան կիրառման իրավական հիմք հանղիսաղղղ իրավական ակսերը («Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-ղ, 25-ղ, 27-ղ հողվաճները, «Ավելաղցվաճ արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 43-ղ հողվաճը, «ղարսաղիղ սղցիալական աղահովաղության վճարների մասին» ՀՀ օրենքի 6-ղ հողվաճի 6-ղ կեղը), ինչղես նան նվաճ է խախսման ժամկեղը՝ 2004 թվականի 4-ղ եռամսյակ:

*2) վճարել բողղն երկրորղ հիմքով հիմնալոր է հեկյալ պասճառաբանղյանը.*

Տեսչության աւխասակիցների կողմից ընկերղյունում կատարվել է բյուջեի հե սիդիսհարաբերղյունների ճեսության սսուգում: ՀՀ կառավարղյանն առընթեր հարկային ղեսական ճառայղյան ղեսի 14.06.2005 թվականի թիվ 1-07/497-Ա հրամանով սսուղումը կասեղվել է սսուգման ընթաղում առաղաղաճ առանճին սեղեկղյունների ճեսման նղասակղով: Մասնավորաղես, ղաւեսնասար անճանց մոս կասկաճ է առաղաղեղ գորճարքի իրական արժեքի վերաբերյալ: Հարկային մարմնի կողմից հարկ վճարղղի՝ հարկվող օղեկեղները և հարկային ղարսավորղյունները հաւարկելու նղասակղով գույքի արժեքի գնահատման հարցում է կատարվել ՀՀ կառավարղյանն առընթեր անւարժ գույքի կադասրի ղեսական կոմիսե, «Մաղաքյան և ողիներ» և «Էլեֆանտ-ռիելթի» անւարժ

գույքի գնահատմամբ զբաղվող ընկերություններ: Հաշվարկների հիմք է ընդունվել նշված կազմակերպություններից ՀՀ կառավարությանն առընթեր անճարժ գույքի կադաստրի ղեկավար կոմիտեի տասնամյակային, ըստ որի հաշվարկվել է վիճելի գույքի նվազագույն արժեքը՝ 234.901.3 հազար ՀՀ դրամ: Ըստ հաշվարկների՝ վիճելի գույքի իրական արժեքի և փաստացի իրացման արժեքի տարբերությունը կազմել է 198,9 մլն ՀՀ դրամ (234.9 մլն-36,0 մլն=198.9 մլն):

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի համաձայն՝ հարկերը ճիշտ հաշվարկելու, ժամանակին վճարելու և հարկային օրենսդրության մյուս դաշտանջները դաշտանջելու դատաստանատվությունը կրում են հարկ վճարողները և դրանց (ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների)՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դատարանատար անձինք: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն, եթե հարկ վճարողն ակնհայտ կեղծ սվյալներ է մտցնում հարկային տեսչություն ներկայացված հաշվետվություններում, հայտարարագրերում, հաշվարկներում և այլ փաստաթղթերում, որի հետևանքով անհնար է դառնում հարկային դատարկությունը, ապա հարկվող օբյեկտները և հարկային դատարկությունները հաշվարկում է հարկային տեսչությունը՝ ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով:

Մինչդեռ, ընկերությունը ճիշտ չի հաշվարկել ավելացված արժեքի հարկը, քանի որ որդես հարկման օբյեկտ ընդունել է ոչ թե գործարքի իրական արժեքը, այլ իրական արժեքից էականորեն ցածր գինը՝ դրանով իսկ խախտելով հարկերը ճիշտ հաշվարկելու օրենսդրությամբ սահմանված իր դատարկությունը:

Վճարել դատարանը զսնում է, որ սնտեսական դատարանը, նշելով, թե սվյալ դատարգայում բացակայում է ակնհայտ կեղծ սվյալներ մտցնելու դեղքը, քանի որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, հարկվող օբյեկտը թաղցնելը կամ դակաս ցույց սալը՝ հարկային տեսչություն ներկայացված սվյալ հարկատեսակի հաշվարկներում հարկվող օբյեկտը ցույց չսալը, դակաս ցույց սալը կամ էլ գործունեություն չիրականացնելու մասին կեղծ սվյալներ ներկայացնելն է՝ սխալ է մեկնաբանել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ դատարկությունը:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ ադրանքների անհատույց մատակարարման, ծառայությունների անհատույց մատուցման, ինչդեռ նաև այն դեղքում, երբ դրանց դիմաց սվյալ գործարքների (գործառնությունների) համար սովորականի համեմատ կիրառվում են իրական արժեքից էականորեն ցածր գներ (մատակակի հատուցում), հարկման օբյեկտ է համարվում այդդիսի կամ նույնանման գործարքների համար համեմատելի հանգամանքներում որդես հարկվող Եղանառություն ընդունվող՝ սույն օրենքին համատատաստան որոշվող մեծությունը (գործարքի արժեքը, վճարի վարձատրոթյան, դարգևի կամ այլ դրամական հատուցման մեծությունը), իսկ դրա բացակայության դեղքում՝ գործարար Եղանակներում համեմատելի հանգամանքներում նույնանման գործարքների համար սովորաբար որդես հարկման օբյեկտ ընդունվող մեծությունը (գործարքի իրական արժեքը): Նույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի իմատսով՝ ԱԱՀ-ով հարկվող գործարք է համարվում ադրանքների մատակարարումը, որն իրականացվում է սեփականության իրավունքը հատուցման դիմաց այլ անձի փոխանցելու միղոցով: Փատսորեն, սույն հոդվածի իմատսով ադրանքների մատակարարում չի համարվում միայն ֆիզիկական անձանց անձնական գույքի օտարումը: Նշված նորմը բացառություն է ընդհանուր կանոնից, հետևաբար, կիրառելով բացառման մեթոդը,

---

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «մասակարարում» եզրույթն իր մեջ ներառում է իրավաբանական անձանց կողմից գույքի ցանկացած օտարում, որը սկսյալ դարագայում դրսևորվել է առուվաճառքի դայմանագրի տեսքով: Նշված հոդվածների բովանդակությունից դարզ է դառնում, որ այն դեղմեում, երբ գործարքի համար սովորականի համեմատ կիրառվում է իրական արժեքից էականորեն ցածր գին, ադա հարկման օբյեկտ է համարվում գործարքի իրական արժեքը, այսինքն՝ գործարար Երջանակներում համեմատելի հանգամանքներում նույնանման գործարքների համար որդես հարկման օբյեկտ ընդունվող մեծությունը:

Առուվաճառքի դայմանագրով գործարքի արժեքը կազմել է 36,0 մլն ՀՀ դրամ, որը սովորականի համեմատ գործարքի իրական արժեքից էականորեն ցածր գին է, ինչն ադադուցվում է ՀՀ կառավարությանն առընթեր անԵարժ գույքի կադասրի դեսական կոմիտեի, «Մադաքյան և որդիներ» և «Էլեֆանտ-դիելքի» անԵարժ գույքի գնահատամը գբադվող ընկերությունների կողմից սրված դասասիսաններով, և Բանի որ խոսքը գնում է իրական արժեքից էականորեն ցածր գին ունեցող գործարքի մասին, ադա կիրառելի են վերը նշված օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ կետի դահանջները, այն է՝ հարկման օբյեկտ համարել ոչ թե գործարքի արժեքը, այլ գործարքի իրական արժեքը:

Այսդիսով, վճռաբեկ բողոքում նշված հիմքերի առկայությունը ՀՀ Բադաբադիական դատարարության օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն սնեսական դատարանի վճիռը բեկանելու հիմք է:

Ելնելով վերոգրյալից և դեկավարվելով ՀՀ Բադաբադիական դատարարության օրենսգրքի 236-239-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ սնեսական դատարանի 30.05.2006 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր Բնություն:

2. Մույն որոշումն օրինական ուժի մեջ է մնում հրադարակման դահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ usnrագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵԼ՝ usnrագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՈՒԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Հայաստանի Հանրապետության  
ֆաղափացիական գործերով  
վերաքննիչ դատարանի վճիռ  
Քաղափացիական գործ թիվ S-1924  
Նախագահող դատավոր՝ Ն.Տավարացյան

Քաղափացիական գործ թիվ 3-2413(ՏԳ)  
2006թ.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ՀՀ վճռաբեկ դատարանի ֆաղափացիական դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս.ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Ս.ԳՅՈՒՐՉՅԱՆԻ  
Է.ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ

2006 թվականի դեկտեմբերի 21-ին

դռնբաց դատական նիստում, քննելով հայցվոր Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային ղեկավարության (այսուհետ նաև՝ Ծառայություն) կողմից ներկայացված վճռաբեկ բողոքը ՀՀ սննդամթերքի դատարանի (այսուհետ նաև՝ Դատարան) 2006 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ S-1924 ֆաղափացիական գործով կայացված վճռի դեմ՝ ըստ հայցի Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային ղեկավարության Նախրիի սարածֆային հարկային ծառայության ընդդեմ «Սառֆիր» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ նաև՝ Ընկերություն)՝ 47 903 700 ՀՀ դրամ բռնագանձելու դիմումից և «Սառֆիր» բաց բաժնետիրական ընկերության հակընդդեմ հայցի՝ 25.05.2005 թվականի թիվ 1018228 և 22.02.2006 թվականի թիվ 1007227 սուուգման ակտերը մասնակի անվավեր ճանաչելու և սկզբնական հայցը 4 829 500 ՀՀ դրամ գումարի չափով բավարարելու դիմումների մասին,

**Պ Ա Ր Չ Ե Ց**

**1. Գործի դատարանական նախադասնությունը.**

Դիմելով դատարան՝ հայցվորը դիմում է դատարանին հոգուս Հայաստանի Հանրապետության բռնագանձել 47 903 700 ՀՀ դրամ:

---

Դիմելով դասարան հակընդդեմ հայցվորը ղախանջել է 25.05.2005 թվականի թիվ 1018228 և 22.02.2006 թվականի թիվ 1007227 սուզման ակտերը մասնակի անվավեր ճանաչել և սկզբնական հայցը բավարարել 4 829 500 ՀՀ դրամ գումարի չափով:

ՀՀ սնեստական դասարանի 2006 թվականի սեդեսմբերի 13-ի թիվ S-1924 վճռով սկզբանական հայցը բավարարվել է մասնակի: Վճռվել է ղախասախանող «Սադֆիր» բաց բաժնետիրական ընկերությունից հոգուս ՀՀ ղեսական բյուջեի բռնազանձել 10374500 ՀՀ դրամ, որից 7682500 ՀՀ դրամ ղարսաղիր սոցիալական վճար, իսկ 2692000 ՀՀ դրամը՝ ասհուրասհարկի գումար: Սկզբանական հայցը մնացած մասով մերժվել է:

Հակընդդեմ հայցը բավարարվել է մասնակի: Անվավեր է ճանաչվել Հայասանի Հանրաղեսուրյան կառավարության առընթեր հարկային ղեսական ծառայության 2005 թվականի մայիսի 25-ի թիվ 1018228 սուզման ակտի 3-րդ կեսը: Հակընդդեմ հայցը մնացած մասով մերժվել է:

Սույն գործով վճաբել բողոք է ներկայացրել Հայասանի Հանրաղեսուրյան կառավարությանն առընթեր հարկային ղեսական ծառայությունը:

## **2. Վճաբել բողոքի հիմները, փաստերը և ղախանջը.**

Սույն վճաբել բողոքը ֆնվում է հեսկյալ հիմների սահմաններում ներհիբյալ հիմնավորումներով.

1) Դասարանը չի կիրառել «ղարսաղիր սոցիալական աղահովագրության վճարների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հողված 5-րդ մասը, որը ղես է կիրառել:

Ծառայության և Ընկերության միջև կնված ժամանակացույցը ընդամենը հնարավորություն է ընձեռում գույքի և հարկային հաեիվների վրա դրված արզելանը հանելու և ժամանակացույցում նեված ժամկեսներում մաս-մաս մարելու հարկային ղարսավորությունները, այլ ոչ թե ազասում է օրենքով սահմանված սույժերը վճարելու ղարսավորությունից, ինչղես դա գնահասել է դասարանը:

2) Դասարանը չի կիրառել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հողվածի 1-ին մասի «բ» և «գ» կեսերը, 23-րդ հողվածի 1-ին մասը, որոնք ղես է կիրառել:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հողվածի «բ» և «գ» կեսերի համաձայն՝ հարկ վճարողն ինֆնորույն հաեվարկում է սահմանված հարկերի գումարը և սահմանված ժամկեսներում հարկային տեսություն է ներկայացնում հարկային օրենսդրությանը նախասեսված հաեվեսվությունները, հաեվարկները և այլ փաստաթղթեր, որն էլ կասարվել է Ընկերության կողմից:

Համաձայն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հողվածի ղախանջների՝ Ծառայությունը ընկերության կողմից ներկայացված եկամսահարկի տռամսյակային հաեվեսվությունների հիման վրա չկասարված ժամկեսային ղարսավորությունների վրա հաեվարկել է սույժ:

Հեսաբար, սույժերի հաեվարկը կասարվել է գործող օրենսդրության ղախանջներին համաղախասախան, իսկ սկյալ դեղոում սուզման ակտ կամ փոխասղարձ ակտ կազմելու անհրաժեսություն չի առաջանում, և որևէ օրենսդրական ակտով նման ղարսաղիր ղայման նախասեսված չէ:

Բողոք բերած անձը ղախանջել է բեկանել ՀՀ սնեստական դասարանի 2006 թվականի սեդեսմբերի 13-ի թիվ S-1924 վճռի՝ սկզբանական հայցը մերժելու և թիվ 1018228 սուզման ակտի 3-րդ կեսն անվավեր ճանաչելու մասերը:

**3. Վճռաքել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաքել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) ՀՀ սննտապահության դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած 2004 թվականի մարտի 18-ի թիվ S-497 վճռով Ընկերությունից բռնագանձվել է 94 798 400 ՀՀ դրամ՝ որդեսադրույթի սոցիալական ադապտացիայի վճարների գծով ադապտացիայի, սոյա և սուգանի:

2) 2004 թվականի մայիսի 5-ին Ընկերության և ՀՀ սոցիալական ադապտացիայի դեպարտամենտի հիմնադրամի Կոստայի մարզային վարչության միջև կնքվել է ժամանակացույց՝ ՀՀ սննտապահության դատարանի 2004 թվականի մարտի 18-ի թիվ S-497 վճռով առաջադրված ադապտացիայի և հաշվարկված սոյադրույթի ու սուգանի սարժանկես վճարման մասին:

3) 2005 թվականի մայիսի 25-ին Ընկերությունում թիվ 1018228 սուգանի հանձնարարագրի հիման վրա կատարվել է դատարանի սոցիալական ադապտացիայի վճարների և վարձու աշխատողին աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության սուգան:

4) Սուգանի ադապտացիայի կազմվել է թիվ 1018228 ակտ, որի 1-ին կետով որդեսադրույթի և աշխատողի աշխատանքը, որ Ընկերությունը ՀՀ սննտապահության դատարանի 2004 թվականի մարտի 18-ի թիվ S-497 վճռով բռնագանձված գումարը ամբողջությամբ չի վճարել, և ղեկավարվելով «Պատարանի սոցիալական ադապտացիայի վճարների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդված 5-րդ մասով՝ չվճարված գումարի վրա հաշվարկվել են սոյադրույթ:

5) 2006 թվականի փետրվարի 2-ին Ընկերությունում թիվ 1007227 սուգանի հանձնարարագրի հիման վրա կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության սուգան, որի ադապտացիայի 2006 թվականի փետրվարի 22-ին կազմվել է թիվ 1007227 սուգանի ակտ: Այսով աշխատողի է, որ Ընկերությունը սոցիալական վճարները սոցիալական ադապտացիայի բյուջե փոխանցել է օրենքով սահմանված ժամկետների խախտումով:

6) Ընկերության կողմից ներկայացված եկամտահարկի հաշվարկների հիման վրա Ծառայությունը հաշվարկել է 12 760 200 ՀՀ դրամ սոյա:

**4. Վճռաքել դատարանի դատառաքանությունները և եզրահանգումները.**

Քննելով վճռաքել բողոքները նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաքել դատարանը գտնում է, որ՝

*1) բողոքն առաջին հիմքով հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ.*

«Պատարանի սոցիալական ադապտացիայի վճարների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ սոցիալական վճարումների կատարումը սահմանված ժամկետներից ուշացնելու օրվանից մինչև 365-րդ օրը ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար ադապտացիայի գանձվում է սոյա՝ ադապտացիայի 0,15 տոկոսի չափով: Վերոհիշյալ սոյադրույթ կիրառվում է նաև սուգանաբերված (դատարանից սուգան) սոցիալական վճարումների, սոցիալական վճարների նվազեցված հաշվարկման օբյեկտի նկատմամբ հաշվարկված սոցիալական վճարների գումարների գծով՝ դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար:

---

Այստիսով, շարադրված հոդվածում դասասխանասվության կիրառման համար միակ հիմքը սոցիալական վճարների գումարների վճարման ժամկետի խախտումն է:

Դասարանի այն դասճառաբանությունը, որ Ընկերությունը վճարումները կատարել է ըստ ժամանակացույցի, և հետևաբար, ժամկետանց վճարման փաստ առկա չէ, հիմնավոր չէ, քանի որ հենց ժամանակացույցով սահմանված ժամկետներում վճարումների կատարումը ինքնին արձանագրում է այն փաստը, որ Ընկերությունը դարձադիր սոցիալական ադախովագրության վճարների դարձավորությունները կատարել է օրենքով սահմանված ժամկետների ուժացումներով:

«Պարտադիր սոցիալական ադախովագրության վճարների մասին» ՀՀ օրենքը կամ «Հարկերի մասին» ՀՀ օրենքը և դրանց հիման վրա ընդունված որևէ իրավական ակտ, որը արճոնություն է սահմանում սոցիալական վճարների գումարների վճարման ժամկետի խախտման համար տույժերի չվճարման առումով առկա չէ: Հետևաբար, Ընկերության հետ կնքված ժամանակացույցը, որևէ ձևով չի կարող Ընկերությանն ազատել դարձադիր սոցիալական ադախովագրության վճարներն ուժացնելու հետևանքով օրենքով սահմանված տույժերից:

2) *բողոքն երկրորդ հիմնով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի «բ» և «գ» կետերի համաձայն՝ հարկ վճարողն ինքնուրույն հաշվարկում է սահմանված հարկերի գումարը և սահմանված ժամկետներում հարկային տեսչություն է ներկայացնում հարկային օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունները, հաշվարկները և այլ փաստաթղթեր:

Սույն գործով հաստատված փաստերի հիման վրա Ընկերությունը ներկայացրել է եկամտահարկի վճարման մասին տեղեկություններ:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ հարկերի հաշվարկման և վճարման կարգի նկատմամբ հսկողությունն իրականացնում է հարկային տեսչությունը:

Նույն օրենքի 23-րդ հոդվածի համաձայն՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուժացնելու դեղմում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը (հարկային օրենսդրությամբ սահմանված դեղմերում՝ հարկային գործակալը) վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված հարկի գումարի 0,15 տոկոսի չափով: Նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է այն դեղմերը, երբ հարկ վճարողը կիրառում է նշված տույժը, մասնավորապես ժամանակին չմուծված հարկի գումարների (այդ թվում նաև հարկային օրենսդրությամբ սահմանված դեղմերում՝ հարկային գործակալի կողմից չվճարված) նկատմամբ:

Սույն գործով հաստատված փաստերի հիման վրա Ընկերության կողմից հարկի վճարումը սահմանված ժամկետներից ավելի ուժ վճարման հիմք են հանդիսացել հենց Ընկերության կողմից ներկայացված հաշվետվությունները: «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն՝ սահմանված տույժի հաշվարկման և վճարման դարձակախությունը կրում է Ընկերությունը: Ընդ որում Ծառայությունը, ունենալով հարկերի հաշվարկման և վճարման կարգի նկատմամբ հսկողություն իրականացնելու օրենքով սահմանված դարձակախություն, սվյալ դեղմում դարձավոր էր դասական կարգով ներկայացնել այն հաշվարկը, որն ադախուցում է Ընկերության կողմից չհաշվարկված և չվճարված տույժի չափը:

Դասարանի այն դասճառաբանությունը, որ բացակայում են սվյալ

սեղեկությունները ձեռք բերելու առաջույցները, և Ծառայությունը դարձավոր էր սնուզման ակտի ներկայացնել, անհիմն է, քանի որ սկսյալ դեղմում ինչդես վերը նշվեց հարկի հաշվարկման դարձականությունը Ընկերությանն է, և «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի կարգավորումը բխում է ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի դահանջից, համաձայն որի՝ յուրաքանչյուր ով դարձավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, տուրքեր, կասարել դարձադիր այլ վճարումներ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատարանության օրենսգրքի 236-239-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Հայցվոր Հայաստանի Հանրադեություն կառավարությանն առընթեր հարկային դեղսական ծառայության վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ սնեստական դատարանի 2006 թվականի սեղեսեմբերի 13-ի թիվ Տ-1924 վճիռը հայցը մերժելու և Հայաստանի Հանրադեության կառավարությանն առընթեր հարկային դեղսական ծառայության թիվ 1018228 սնուզման ակտի 3-րդ կեսն անվավեր ճանաչելու մասերով և գործն այդ մասերով ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մնում հրադարակման դահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ usnrագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ usnrագրություններ*



սարածային ստրաբաժանմանը (այսուհետև նաև՝ Կադասր) կասարել Երևանի ֆաղաֆաղի 2005 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 2453-Ա որոշման 3-րդ կետի դաժանությամբ, ինչպես նաև գրանցել իր սեփականության իրավունքը Երևան ֆաղաֆի Նոր Նորի 9-րդ միկրոշրջանի թիվ 14 շենքի մոտ գտնվող 51,9 քմ ավտոմեքենայի նկատմամբ:

Ավան և Նոր Նորի համայնքների առաջին ասյանի դատարանի 2006 թվականի մայիսի 17-ի վճռով հայրը բավարարվել է:

ՀՀ ֆաղաֆաղիական գործերով վերահսկիչ դատարանի 2006 թվականի սեպտեմբերի 28-ի վճռով հայրը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ կառավարությանն առընթեր անճարժ գույքի կադասրի ղեկավար կոմիտե:

Վճռաբեկ բողոքին դատարանն չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկերը և դաժանությունը.**

Սույն վճռաբեկ բողոքը բնութագրվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներհանրապես հիմնավորումներով.

